Մեծ Եղեռնի 75-ամեակին առիթով, հայրենաբնակ ու աշխարհացրիւ Հայութիւնը, Հայաստանէն մինչեւ աշխարհի ամենէն հեռաւոր անկիւնները, անտեսելով մաշեցնող ժամանակի վնասակար ազդակը, ու յաղթահարելով զանազան բնոյթի դժուարութիւններ եւ արգելքներ, Ապրիլեան Ոգեկոչումներուն ընդմէջէն աւելի բուռն ու վճռական կերպով պիտի հնչեցնէ արդար եւ անժամանցելի իր պահանջատիրութիւնը: Ողջ հայութիւնը, մէկ մարդու նման, պիտի պահանջէ ու պայքարի, որ ոչ միայն համաշխարհային հաստապարտումի ենթարկուի ցեղասպան Թուրքը, այլ մանաւանդ՝ աշխարհի բոլոր արդարասէր ու խաղաղասէր մարդիկ, ժողովուրդներ եւ պետութիւններ անյապաղ խստիւ միջոցներու դիմեն առաջիր առնելու համար ամէն տեսակի նախճիրներու եւ ոճրային արարքներու, որոնք կը հրահրուին Փաներկրիզմի ջատագով, հին թէ նոր, յայտնի թէ թաքուն ուժերուն կողմէ: Անհերքելի փաստ է, որ վերջին ժամանակներուն, թէեւ նոր պիտակներու տակ եւ տարբեր վայրերու մէջ, նոյն Փաներկրիզմն ու Փաներկրիզմն է որ կը գործէ՝ նոյն հին վայրագութեամբ, անհամար նոր զոհեր խլելով:

Հայկական ցեղասպանութեան 75-ամեակին առիթով, Հայութիւնը միահամուռ կը պահանջէ որ հին թէ նոր ամէն տեսակի ցեղասպանական արարքները, ուր որ ալ գործուին, ամենախիստ պատիժներու ենթարկուին, որպէսզի ոչ մէկ տեղ այլեւս ցեղասպանութիւն տեղի չունենայ:

Արժանթինահայութիւնը, որպէս մէկ անբաժան եւ գործօն մասնիկը աշխարհացրիւ Հայութեան, ոգեկոչական աշխատանքներու եւ պահանջատիրական պայքարի գծով տասնեակ տարիներու ընթացքին հարստացած փորձառութեամբ զինուած, Մեծ Եղեռնի 75-ամեակի նշումը կը դիմաւորէ միասնական շարքերով, գիտնալով այս տարուան նշանակութիւնը մեր ազգային միասնականութեան եւ պատմական յանձնառութեանց տեսակէտէն:

Ինչպէս զատէն լոյս ընծայուած յայտագիրը ցոյց կու տայ, Պուէնոս Այրէսի մէջ այս տարի տեղի ունենալիք ոգեկոչական եւ պահանջատիրական արարողութեանց եւ հաւաքներուն բնոյթն ու նշանակութիւնը նկատի ունենալով, հարկ է որ շատ աւելի խիտ շարքերով ու յանձնառու եւ պայքարող Հայ Մարդու նուիրումով մեր մասնակցութիւնը բերենք Համագաղութային բոլոր ձեռնարկներուն:

Արդ, այս ոգիով ու համոզումով, կոչ կ'ընենք մեր գաղութի բոլոր անդամներուն անխտիր, 75-ամեակի պատգամը լրիւ կերպով իրագործելու նախանձախնդրութեամբ, որ խուռներամ շարքերով եւ պատասխանատուութեան խոր գիտակցութեամբ իրենց մասնակցութիւնը բերեն Ապրիլեան Ոգեկոչումներու աշխատանքներուն ընդհանրապէս Քաղաքական Հաւաքին եւ անոր յաջորդելիք Պահանջատիրական Հաւաքական Բողոքի Արտայայտութեան, որ տեղի պիտի ունենայ Թրքական Դեսպանատան առջեւ–, անգամի մը եւս բարձր պահելով մեր ազգային իրաւունքներու հետամնդրման գծով ցարդ գործադրուած պահանջատիրական ոգին:

Մեծ Եղեռնի 75-ամեակի Ոգեկոչման Համագաղութային Մարմին

1915 ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 75—ԱՄԵԱԿ 1990
Յիշատակումի Ձեռնարկներու Ցայտագիր

Երկուշաբթի 23 Ապրիլ,

ժամը 21.00-ին՝

«Վերադարձ Դէպի Արարատ» ժապաւէնի ցուցադրութիւն, կազմակերպութեամբ արժանթինահայ համայնքի կնոջական բոլոր միութիւններուն, «Արմենիա» թատերասրահին մէջ (Արմենիա 1366, 4-րդ յարկ):

ժամը 23.00-ին՝

Հանգումի արարողութիւն Սրբ.Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ:

Երեքշաբթի 24 Ապրիլ,

ժամը 10.00-ին՝

Սուրբ Պատարագ եւ Հոգեհանգստեան պաշտօն Մեծ Եղեռնի նահատակաց անմոռ յիշատակին, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ: Ծաղկեպսակի զետեղում նահատակաց Ցուշարձանին:

ժամը 13.00-ին՝

Ժողովրդային հաւաք-քաղաքական մեքենայ, Լիպերթատոր եւ Թակլէ հրապարակին վրայ, մասնակցութեամբ արժանթինեան քաղաքական դէմքերու: Մեծարանք Ազատարար Սան Մարթինի՝ ծաղկեպսակի զետեղում Կրան Պուրկ հրապարակին վրայ: *Բողոքի պահանջատիրական ցոյց թրքական դեսպանատան դիմաց:*

ժամը 19.00-ին՝

Սուրբ Պատարագ հայ կաթողիկէ համայնքի Սուրբ Նարեկայ Տիրամօր եկեղեցիին մէջ:

Շաբաթ 28 Ապրիլ,

ժամը 18.00-ին՝

Հայկական ձեւով Սուրբ Պատարագ Քաթէտրալին մէջ, նախագահութեամբ՝ Պուէնոս Այրէսի Առաջնորդ Արքեպս.Քարտէնալ Խուան Քարլոս Արամպուրու:

1915 ԱՊՐԻԼ 11-14 1990

Ապրիլեան Եղեռնի Ոգեկոչում Մար Տէլ Փլաթայի Մէջ

Կիրակի 22 Ապրիլի 1990

ԺԱՄԸ 12.30-ԻՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ ՁԵՏԵՂՈՒՄ
Փլասա Սան Մարթին
Կը խօսի պատմաբան տոքթ.Փասքուալ Օհանեան

ԺԱՄԸ 12.30-ԻՆ Ս.ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ
Տոն Պոսքօ եկեղեցւոյ մէջ (calle Rivadavia y Don Bosco)
Կը պատարագէ Տ.Գիսակ Վրդ.Մուրատեան
կը սպասարկէ Հրաչ Սարկաւագ Սուրէնեան
Երգեցողութիւնը կը կատարուի հրաւիրեալ դպիրներով ղեկավարութեամբ Նուպար Սարկաւագ Տեմիրճեանի:

ԺԱՄԸ 18.30-ԻՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՄԱՏԱՂ (calle 11 de Septiembre 3680)

Երեքշաբթի, 24 Ապրիլ

ԺԱՄԸ 20-ԻՆ հրապարակային հարցազրոյց (Prensa, Radio y Televisión)
Կը խօսի տոքթ.Փասքուալ Օհանեան
Մար Տէլ Փլաթայի Պետական Գրադարանին մէջ
(calle 25 de Mayo y Catamarca)

ԺԱՄԸ 20.45-ԻՆ Հարցազրոյցի երկրորդ մասը
Պիտի յատկացուի տոքթ.Փասքուալ Օհանեանի, La Cuestión Armenia y Las Relaciones Internacionales գրքի ներկայացումին:

Սիրով կը հրաւիրուին գաղութիս բոլոր անդամները անխտիր

Մար Տէլ Փլաթայի
Հայրենակցական Միութիւն

Դէպի Մեծ Եղեռնի 75ամեակ

«Սէրը Դէպի Հայաստանը Արեանս Մէջ է»

Կ'ըսէ Մեծ Հայասէր Լեփսիուսի Թոռը

Գրեց՝ Աննա Համբարձումեան

Իոհաննես Լեփսիուս... Հայ ժողովրդի մեծ բարեկամը իր կեանքը նուիրել է մի անվերջ պայքարի՝ յանուն արդարութեան, յանուն նահատակուող մի ժողովրդի փրկութեան: Լեփսիուսը Գերմանիայի ժողովրդի ոտնահարուած խղճի ձայնն էր: Քայզերեան պաշտօնեաները փորձում էին լռեցնել Լեփսիուսին, քանի որ նրա հայասիրական գործունէութիւնը խոչընդոտում էր կայսրութեան քաղաքական ծրագրերի իրականացմանը Փոքր Ասիայում ու Մերձաւոր Արեւելքում: Մէկ անհատ՝ ընդդէմ պետական մեքենայի: Ուժերի ինչպիսի՜ անհաւասարութիւն: Սակայն դա չվհատեցրեց Լեփսիուսին: Նա ժողովներ էր կազմակերպում, դրամ հաւաքում, որ օգտագործում էր հայերի համար որբանոցներ, դպրոցներ կառուցելու նպատակով: «Ճշմարտութիւն Հայաստանի մասին»՝ այսպէս անուանեցին նրա այն յօդուածները, հաւաքած փաստացի նոթերը, որոնք Լեփսիուսն ուղարկում էր Փոքր Ասիայից՝ 1886 թուականից սկսած: Դրանց նպատակն էր Եւրոպայի հասարակայնութեան ուշադրութիւնը սեւեռել հայերի կրած դժբախտութիւնների, նրանց դէմ նիւթուող յանցաւոր գործողութիւնների վրայ: Յետագայում նա այդ նիւթերն ի մի բերեց «Հայերն ու Եւրոպան. Մեղադրանք Քրիստոնեայ Պետութիւններին եւ Կոչ Քրիստոնեայ Գերմանիային» գրքում, որը թարգմանուեց ֆրանսերէն ու անգլերէն եւ դարձաւ կարեւոր մի փաստաթուղթ, որ դարասկզբում ծառայում էր ի նպաստ հայերի պաշտպանութեան, իսկ այսօր՝ թուրքական կեղծարարների քարոզչութիւնը հերքելուն: 1916 թուականի վաղ ամրանը, Ի.Լեփսիուսը գաղտնի տարածեց իր յայտնի «Հաղորդումներ Թուրքիայում Հայ Ժողովրդի Վիճակի Վերաբերեալ» գրքոյկի 20.500 օրինակները, ուր նա ի մի էր բերել այն փաստերը, որոնք հաւաքուել էին 1915 թուականի Յուլիս-Օգոստոս ամիսներին Կոստանդնուպոլիս կատարած իր յայտնի այցելութեան ընթացքում: Իսկ 1919 թուականին, Լեփսիուսը Գերմանիայում տպագրեց «Հաղորդումներ Լրացումներով. Հայ Ժողովրդի Կործանումը» եւ մինչեւ այսօր եզակի «Գերմանիան եւ Հայաստանը 1914-18 թթ.» հատորները, որոնք ուղարկեց Վերսալեան Համաժողով: Բոլորիս քաջ յայտնի է Լեփսիուսի ելոյթը Պերլինում, Սողոմոն Թեհլիրեանի դատավարութեան ժամանակ:

Համաշխարհային Ա. Պատերազմի աւարտից յետոյ էլ Իոհաննէս Լեփսիուսը շարունակում էր ամէն ջանք գործադրել օգնելու եղեռնի զոհերին: Ղազիրում (Լիբանան) նա ստանձնեց հայ որբանոցի դրամական յատկացումները: Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատումից յետոյ Լեփսիուսը կապեր հաստատեց հանրապետութեան ներկայացուցիչներին հետ, մեծ քանակով բուժանիւթեր եւ գրքեր ուղարկեց Հայաստան: Մինչեւ իր կեանքի վերջին օրերը Լեփսիուսը ջանքեր էր թափում Փոցդամում հիմնել հայ-գերմանական ակադեմիա: Ստեղծուած էր ակադեմիայի կանոնադրութիւնը, որոշուած էր գիտական ծրագիրը, անգամ Փոցդամում վարձել էր մի պալատ, ուր պէտք է տեղաւորուէր ապագայ ակադեմիան: Սակայն մահը խանգարեց այս նախագծի իրականացմանը. 1926 թ. Յունուարի 28-ին, Իոհաննէս Լեփսիուսը վախճանուեց:

Մեծ հոգու տէր այս մարդու յիշատակը կենդանի է հայերի սրտում, որոնց փրկութիւնը Լեփսիուսի կեանքի իմաստն էր, նրա «երկրային նախորոշումը», ինչպէս սահմանեց Ֆրանց Վերֆէլը իր «Մուսա Լերան Քառասուն Օրերը» գրքում:

Մանկուց ինձ ծանօթ է Ի. Լեփսիուսի լուսանկարը, եւ ես մի խումբ գերմանացիների մէջ անմիջապէս ճանաչեցի Քրիսթիան Տիւրնակելին՝ հոգեւոր հովիւ Լեփսիուսի թոռանը: Կապոյտ աչքերով, զգայուն, սուր դիմագծերով, արագաշարժ, ոչ շատ բարձրահասակ մի գերմանացի՝ յիշում ենք Իոհաննէս Լեփսիուսի դիմանկարը Ֆ. Վերֆէլի վէպից: Այդպիսին է նաեւ Քրիսթիան Տիւրնակելը: Այս բարի, բացսիրտ, ժպտացող մարդը միանգամից համակրանք առաջացրեց եւ ցրեց այն ամբողջ լարուածքը, որով պատրաստւում էի հանդիպմանը: Դեկտեմբերի 7-ի աղէտը ցնցեց Պրն. Տիւրնակելին, եւ ահա նա Հայաստանում է, հայ ժողովրդին օգնութեան ձեռք մեկնողների շարքում:

Եւրոպական Խորհրդարանի Մայրաքաղաք Ստրազպուրկի Մէջ

Գիտաժողով Նուիրուած Հայ Յուշարձաններու Պահպանման

Ապրիլ 12-14 Ստրազպուրկի (Ֆրանսա) մէջ եռօրեայ կարեւոր գիտաժողով մը պիտի կայանայ, նուիրուած Թուրքիոյ հայկական յուշարձաններու պահպանման: Գիտաժողովը կ'առաջադրէ զոյգ որոշումներ առնել. բացայայտել Հայկ. յուշարձաններու ներկայ վիճակը եւ գտնել լուծումներ, որոնք հաւասարապէս ընդունելի ըլլան Թուրքիոյ եւ հայկական շահերուն համար:

Ապրիլեան Եղեռնի 75ամեակը, յուշատօներէն եւ այլ կարգի նախաձեռնութիւններու կողքին եւ անոնցմէ անդին՝ պէտք է ծառայէ միջոցներ գտնելու փրկելու համար պատմական հողերուն վրայ 2500 տարուան հայկական մշակոյթի եւ կեանքի վերջին վկայութիւնները եղող եւ դեռ փլատակի չվերածուած յուշակոթողները:

Յաջողելու համար այս նպատակին մէջ, անհրաժեշտ է, կը գրէ Փրոֆ. Վազգէն Բարսեղեան, որ հայերը եւ եւրոպացիները համոզեն թուրքերը որ իրենց շահուն համապատասխան է յուշարձաններուն պահպանման ինչպէս նաեւ մարդկային իրաւանց հարցերու պաշտպանութեան հարցերը:

Գիտաժողովին նախաձեռնութիւնը կը պատկանի Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. Հայրապետին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Գարեգին Բ.ի եւ Հայաստանի Գիտութեանց Ակադեմիայի նախագահ Վիկտոր Համբարձումեանի: Ան կը վայելէ նաեւ հովանաւորութիւնը Ֆրանսայի Մշակոյթի եւ Հաղորդակցութեանց նախարար Ժագ Լանկի:

Թուրքիա, որ անդամ է Եւրոպական Խորհուրդին, արդէն սկըսած է իր միջոցներով պայքարիլ, որ ջնջուի գիտաժողովը: Ան նաեւ սպառնալիքներ կատարած է մասնակից անձնաւորութեանց եւ գիտնականներուն, որ իրենց առջեւ կրնայ ապագային փակել Թուրքիոյ դռները:

Այսուհանդերձ, Թուրքիա կ'աշխատի մուտք գործել Եւրոպական համայնքին մէջ: Կարենալ դարձընելու համար իր թեկնածութեան ընդունումը, ան պէտք է ցոյց տայ իր բարեկամեցողութիւնը իր արարքները ներդաշնակելու եւրոպական համայնքի եւ ՄԱԿի միջազգային կարգ մը օրէնքներուն հետ, որոնց մէկ մասը կը վերաբերին անցեալի քաղաքակրթութեան յուշարձաններու պաշտպանութեան եւ մարդկային իրաւանց յարգումին, թէեւ լաւ գիտենք, որ պետութիւններու քաղաքական շահերը կընան զիջումներ կատարել այդ սկզբունքներու հաշւոյն: Օրինակը դեռ մեր մտքին մէջ թարմ է, ու չենք մոռցած Հայկական Յեղասպանութեան Բանաձեւին վիճակուած բախտը Ամերիկեան Ծերակոյտին մէջ:

Եւրոպական Խորհուրդին ընկերքունքներուն մաս կը կազմէ հնարնական ուսումնասիրութիւններու յարգանքը. այդ ծիրէն ներս, բազմաթիւ գիտական ուսումնասիրական կազմակերպութիւններ կը գործեն եւ զօրավիգ կը կանգնին հնարնական աշխատանքներու (PACT): Թուրքիան պէտք է միանայ կամ իրմէ պէտք է պահանջուի որ մաս կազմէ PACT-ի:

Գիտաժողովը պիտի սկսի անհատական զեկուցումներով, նիւթ ունենալով Յուշարձաններու ներկայ վիճակը, Հայաստանի, Նախիջեւանի, Արցախի, Ատրպէյճանի, Վրաստանի եւ Իրանի մէջ: Թուրքիոյ յուշակոթողներու մասին զեկոյցին առընթեր, պիտի ըլլան 200 սահիկներու լուսարձակում: Ապա որոշում պիտի առնուի, կամ առաջարկ մը բանաձեւուի թէ ինչպէս անոր յուշակոթողները, Աղթամարի եկեղեցին եւ շուրջ քսան ուրիշ յուշարձաններ կարելի պիտի ըլլայ պաշտպանելու նոր աւերներու դէմ: Միջազգային UNESCO, ICOMOS եւ ICCROM կազմակերպութիւնները պիտի աջակցին Թուրքիոյ յուշակոթողներու պաշտպանութեան աշխատանքին մէջ: Սակայն նոր մօտեցում մը անհրաժեշտ է, որ վերոյիշեալ կազմակերպութիւնները աւելի ներգործօրէն մասնակից դառնան պաշտպանութեան ծրագրին: Բանաձեւը նկատի պիտի առնէ նաեւ վերականգնման ծրագիրներու նիւթական հարցը:

Ուրիշ բանաձեւով մը՝ Թուրքիոյ պիտի առաջարկուի, որ իր գործակցութիւնը բերէ գիտական աշխատանքներուն, կամ զանոնք դիւրացնէ: Այս երկու բանաձեւ որոշումներու հարցը յանձնուած է միջազգային օրէնսգէտներու

Դասախօսութիւն...

(Տար. 6-րդ էջէն)

Հակախորհրդային դիրքորոշմամբ կորո... ցուցած է յաչս Քրեմլինի, ուր ներկայիս փերեսթրոյկեան ... փոփոխութիւնը դեռ կը չարունակէ իր ընթացքը: Ցայտնի է թէ ... դրոնական կառավարութիւնը ամբողջական տէրն է երկրին, ... ինչ որ մեզ համար կենսական հարց է: Տոքթ. Անթուան ... դրաւ այս կէտին վրայ եւ աւելցուց թէ հայրենի թէ' կառավար... թիւնը եւ թէ' ժողովուրդը անցեալի փորձառութիւններէն օգտ... ողջմտութիւնը ունենան եւ թէ անոնք են որ տէրն են երկրին եւ ... ճակատագրին: Սփիւռքահայ գաղութները անհրաժեշտ ... հայրենիքին, որ մշտական յարաբերութեան ... է անոր հետ: Մէկ ժամ տեւած դասախօսութեան աւարտին ... ջեց ներկաներու ուղղած հարցումներուն, զանոնք գոհացու... սպառիչ տեղեկութիւններ միջոցաւ:

Ինքնապաշտպանութիւն

Գրեց՝ Արայ Գալայճեան

«Այն ժողովուրդը որ չի հոգում իր ապագայի ապահովութիւնը, ինքն իրեն կործանման է դատապարտում»:

Տիգրան Խաչատրեան

Յունուարին հաւաքական սարսափի օրեր եւ շաբաթներ ապրեցանք ի տես այն ողբերգութեան որ տեղի կ'ունենար Հայաստանի սահմաններուն վրայ եւ Արցախի շուրջ: Պարզապէս, պատերազմական վիճակ կը տիրէր Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ: Եւ այս կացութիւնը աւելի կը բարդանար անով որ Հայաստան ստիպուած էր պատերազմական երկու ճակատներ պաշտպանել. արեւելքէն՝ ատրպէյճանականը, եւ հարաւարեւմուտքէն՝ Նախիջեւանի բոլոր սահմանները:

Տագնապի օրեր եւ շաբաթներ էին, երբ, մէկ կողմէ Պաքուի եւ այլ ատրպէյճանական շրջաններու մէջ գործադրուած լենկթիմուրեան մարդասպանութիւններու գոյժերը կը ցնցէին մեզ, եւ միւս կողմէ ոճրագործներու Հայաստան ներխուժման կարելիութիւնը կ'աւելնար ժամ առ ժամ:

Նպատակս չէ այս բոլորին պատճառներուն եւ ունենալիք հետեւանքներուն մասին գրել, ոչ ալ վերլուծել Մոսկուայի շարունակուող ոճրապարտ անտարբերութեան ետին գտնուող հաշիւները:

Այսօր կ'ուզեմ տարբեր ցաւ մը քննել *-մեր ժողովուրդին անպատրաստութիւնը*:

Նորութիւն մը յայտնած պիտի չըլլամ եթէ ըսեմ թէ մենք, իբրեւ հաւաքականութիւն, ո՛չ մէկատեն պատրաստ գտնուած ենք դիմագրաւելու փորձանքներ, աղէտներ, ընդհարումներ, մեր ժողովուրդին սպառնացող արհաւիրքներ: Միշտ խորհած ենք թէ *ուրի՛շը* մեզ պէտք է պաշտպանէ, մեր դատին տէր կանգնի, անշահախնդրօրէն թիկունք ըլլայ, պահէ, պահպանէ, եւ խնամէ: Վերջին հարիւր տարիներու մեր պատմութիւնը վկան է այս իրողութեան. մի՛շտ անպատրաստ, մի՛շտ անակընկալի եկած եւ եկող, մի՛շտ մեր հայեացքը ուրիշին սեւեռած: Միւս կողմէ՝ մի՛շտ յոխորտ, մեր հեքիաթային քաջութեան եւ մարտունակութեան առասպելներով սնանող, մեր այսպէս կոչուած իմացական գերակայութեան ապաւինած, եւ մեր արտասուաթոր աչքերը յառած մարտիրոսութեան վարդափուշ լուսապսակին: Դարերու փորձութիւննե՞րը մեզ այնպէս ըրած են, օտար ժողովուրդներու ազդեցութիւննե՞րը, մեր անհայրենիք եւ անգլուխ ըլլա՞լը:

Միւս կողմէ, վստանգի որեւէ պահու ապաստանած ենք «հերոսութեան» տոն-քիշոթեան կեցուածքին, նախընտրած ենք «մարտիրոսանալ» քան զէն ի ձեռին ճակատիլ, խուսափիլ անտեղի եւ անիմաստ մահէ, ըլլալ խորմանկ եւ ոչ թէ մեծաբարբառ փանջունի, պահել հող, տուն, հայրենիք՝ քան կորսնցնել ամէն ինչ «նահատակութեան» վս՜եմ շարժումով մը:

Յունուարի դէպքերը դարձեալ փաստեցին մեր անպատրաստութիւնն ու «մարտիրոսութիւնը»: 1988 Փետրուարէն ի վեր, այն օրէն երբ Սումկայիթի մէջ սորվեցանք որ ատրպէյճանցիները տապարի եւ փամփուշտի լեզուն կը գործածէին եւ ոչ թէ այսպէս կոչուած արդարութեան ու եղբայրութեան, այդ օրէն պէտք էր որ պատրաստուած ըլլայինք մեր գլխուն պայթելիք շա՛տ հաւանական աղէտներու: Սակայն փոխանակ զգաստանալու, մեր ուժերը համախմբելու, կազմակերպուելու, զինուելու, մարզուելու՝ մենք շարունակեցինք Մոսկուային սեւեռել մեր նայուածքներն ու յոյսերը, «դեպուտատական» ժողովներու դաւադիր տողմուտներէն լոյսի եւ արդարութեան նշոյլ ակնկալել:

Աւելին, երբ լարուած կացութիւնը աւելի սուր դարձաւ, մենք լալկան մանուկներու նման դիմեցինք Եւրոպայի եւ Ամերիկայի, Միացեալ Ազգերու Կազմակերպութեան եւ Եւրոպական Խորհրդարանին՝ մեր հայրենիքին եւ ժողովուրդին ապահովութիւնը անոնցմէ ակնկալելով:

Այսքա՞ն անվստահ ենք մեր ուժերուն վրայ. այսքա՞ն ինկած է մեր ցեղային մարտունակութեան վրայ մեր վստահութիւնը: Եթէ հայաստանեան թերթերը բանալու ըլլաք, միայն լորձնաշուրթն փառաբանանքը պիտի տեսնէք ազգային ազատագրական շարժումի դէմքերուն, յաճախ անհեթեթի հասնող չափազանցութիւններով: Զօրավար Անդրանիկի ծննդեան 125ամեակը առիթ եղաւ որ շաբաթներով փառերգութիւններ ըլլան, մեծ հայրենասէրին արտասանած կամ գրի առած ամենէն հասարակ խօսքերն իսկ հրապարակուին:

Միայն փառաբանանք, արդարօրէն եւ պարտադրուած յապաղումով, մեր բոլոր մարտիկներուն: Բայց գործնակա՞նը: Անդրանիկէն, Սեբոբէն, Մանուկեանէն, Աւետիսեանէն առնուելիք դասը **մէկ է. ինքնապաշտպանութիւն:**

Հայաստանի Հանրապետութեան համար, ինքնապաշտպանութիւն կը նշանակէ երկիրը պաշտպանելու սահմանուած զինուորներու պատրաստութիւն, եւ զէնք ու զինամթերք:

«Խորհրդային Հայաստան» օրաթերթը իր 24 Փետրուարի թիւով գրութիւն մը հրատարակած էր, «Այս դառնութիւնը... շա՜տ է դառը», ստորագրուած Տիգրան Խաչատրեանի կողմէ: Յօդուածի աւարտին, խմբագրութիւնը կարճ ծանօթագրութեան մը մէջ կը շեշտէ. «Յօդուածը տպագրում ենք որպէս ահազանգ:...Հանդուրժելն այլեւս յանցանք է»: Ինչի՞ մասին է խօսքը:

Ըստ յօդուածագրին, Խորհրդային Միութեան մէջ հազարէն աւելի ռազմական դպրոցներ, զինուորական բարձրագոյն հաստատութիւններ կան. անոնցմէ մէկն է Երեւանի Մաշտոցի շրջանի «ռազմական թեքումով յատուկ դպրոց»ը, որ կը կրէ «գրահատանկային զօրքերի գլխաւոր մարշալ» Համազասպ Բաբաջանեանի անունը: Ուրեմն, Հայաստան միայն **մէկ** «ռազմական մասնագիտացուած դպրոց» ունի, ուրկէ շրջանաւարտ պիտի ըլլան մեր հայրենիքին պաշտպան սպաներն ու ապագայ հրամանատարները:

Սակայն յօդուածագիրը առաջին պարբերութեան մէջ իսկ կը յայտնէ թէ «դպրոցի ճակատագիրը տնօրինող ՀԽՍՀ Ժողկրթութեան մինիստրութեան» ներկայացուցիչը յայտարարած է որ «այս տարի, հաւանաբար՝ Մայիսին, ԽՍՀՄ պաշտպանութեան մինիստրութիւնը նախատեսել է ստուգումներ կատարել դպրոցում, եւ դպրոցը, իր համոզմամբ, կը փակեն...»:

Շար. 1

«Հայաստանի Ամերիկեան Բարեկամներ»ը Մասնաճիւղ Կը Հաստատէ Հայաստանի Մէջ

Լոս Անճելըս -Մարտ 7- «Հայաստանի Բարեկամներ» նորաստեղծ հասարակական կազմակերպութիւնը որ կը միտի ընդլայնել հայ եւ այլ ժողովուրդներու միջեւ յարաբերութիւնները, իր մասնաճիւղը հաստատած է Երեւանի մէջ որպէս նախաքայլ իր ծրագիրներու յառաջիկայ կիրառումին:

Մասնաճիւղը կը գլխաւորուի Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի նախագահ, Վիքթոր Համբարձումեանի կողմէ որ ստանձնեց կազմակերպութեան նախագահութիւնը կազմակերպութեան ծրագիրներուն ու հետապնդած նպատակներուն մանրամասն ուսումնասիրութենէ մը ետք: Կազմակերպութեան ծրագիրը առաջին անգամ Համբարձումեանին ներկայացուած էր անցեալ Յունիսին, Գիտութիւններու Ակադեմիայի փոխ-նախագահ Ակադեմիկոս Գագիկ Սարգիսեանի կողմէ:

Յունուարի 8-ին Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Նախագահութեան մօտ տեղի ունեցաւ հանդիպում Ակադեմիայի, Հայաստան Համայնավար Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի եւ Հայաստանի Բարեկամներ կազմակերպութեան ներկայացուցիչներուն միջեւ, քննարկելու համար Հայաստանի մասնաճիւղի հաստատման առնչուող այլազան հարցեր: Յունուարի 11-ին Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի Նախագահութեան Խորհուրդը միաձայնութեամբ կայացուց որոշում Ակադեմիայի նախաձեռնութեամբ մասնաճիւղ հաստատելու Հայաստանի մէջ: Տուեալ որոշման հիմամբ ստեղծուեցաւ յանձնախումբ ղեկավարելու վարչա-կազմակերպչական հարցերը:

Այս առնչութեամբ Հայաստանի հեռուստատեսութենէն ելոյթ ունենալով, Ակադեմիկոս Համբարձումեան ըսաւ. «Ինձ համար բարձր պատիւ է ծառայել որպէս նախագահ այս իւրայատուկ կազմակերպութեան որ կը խոստանայ մեծ ապագայ: «Հայաստանի Բարեկամներ»ը նշանակալից դեր պիտի խաղայ ապագային Հայաստանի եւ արտասահմանի միջեւ յարաբերութիւններու ամրապնդման մէջ»: *Փոխ-Նախագահ Սարգիսեան չեչտեց այն իրողութիւնը թէ «Հայաստանի Բարեկամներ»ը ստեղծուած է դառնալու միջազգային բազմազգ կազմակերպութիւն մը Հայաստանի եւ հայ ժողովուրդի բարեկամներու մասնակցութեամբ եւ նախաձեռնութեամբ: Որպէս առաջին նման կազմակերպութիւնը որ համաշխարհային չափանիշով կը հետապնդէ հայութեան համար ամենակենսական արժէք ունեցող այս գործը, Հայաստանի Բարեկամներ կազմակերպութիւնը կը վայելէ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի ամբողջական նեցուկը եւ արժանի է հայութեան բոլոր հատուածներու ամբողջական գործակցութեան իրականացնելու համար իր պատմական առաքելութիւնը:*

Հայաստանի Համայնավար Կուսակցութեան Կեդրոնական Կոմիտէի Սոցեալ-Տնտեսական բաժնի վարիչ Գագիկ Հարութիւնեան, որ խաղացած էր կարեւոր դեր «Հայաստանի Բարեկամներ» ու Երեւանի մասնաճիւղի հաստատման մէջ, կազմակերպութեան ներկայացուցիչներու հետ հանդիպումի մը ընթացքին մանրամասնեց այն պատճառները թէ ինչու «Հայաստանի Բարեկամներ»ը պետական բարձրագոյն մակարդակի հովանաւորութիւն պիտի վայելէ: Այլ հանդիպման մը ընթացքին քննարկուեցան անմիջական գործադրութեան դրուելու նպատակով ֆինանսական ու կազմակերպչական ծրագիրներու կազմակերպութիւնը ամուր հիմերու վրայ դնելու համար:

Հայաստանի հեռուստատեսութիւնը, ձայնասփիւռն ու մամուլը տարբեր առիթներով լայնօրէն արձագանգեցին Հայաստանի Մասնաճիւղի հաստատման ու կազմակերպութեան հետապնդած ընդհանուր նպատակներուն: Հանդիպումներ կայացան պետութեան տարբեր նախարարութիւններու, հաստատութիւններու ինչպէս նաեւ Սփիւռքահայութեան հետ Մշակ. Կապի Կոմիտէութեան ներկայացուցիչներու հետ:

Ստորեւ՝ Հայաստանի Գիտութիւններու Ակադեմիայի որոշման դէքստը «Հայաստանի Բարեկամներ»ու մասնաճիւղի ստեղծման գծով:

Մեծ Եղեռնի 75ամեակին Առթիւ

Ապրիլ 24՝ Ցասումի Եւ Ուխտի Օր

Վեր. Մովսէս Պ. Ճանպազեան

Այս տարուայ Ապրիլ 24-ին պիտի յիշատակենք մեր դարաւոր պատմութեան ամենաճակատագրական ու ամենատխուր դէպքը ներկայացնող՝ մեր ցեղասպանութեան 75-րդ տարեդարձը: 1915-ի Ապրիլ 24-ին էր, երբ Թուրք վատահամբաւ ազգին արիւնարբու ղեկավարները, իրենց տրամադրութեան տակ գտնուող բոլոր միջոցներով , սկսան ի գործ դնել մեր ազգը բնաջինջ ընելու սադայէլեան ծրագիրը:

Պատմութիւնը ծանօթ է մեզի, եւ անոր վերյիշումը միշտ տըխրութիւն եւ զայրոյթ յառաջ կը բերէ մեր մէջ: Մեր ցաւը ու ցասումը կը կրկնապատկուի մանաւանդ, երբ կը տեսնենք, թէ ոճրագործներուն քաղաքակրթըւած կարծեցեալ զաւակները ու յաջորդները, դեռ կը շարունակեն ուրանալ իրենց հայրերուն գործած ոճիրը եւ անճարակ փորձերով կը ջանան հեղաթիւրել կամ քօղարկել պատմական իրողութիւնները: Մեր սուգը ու ընդվզումը կը բազմապատկուի, երբ նաեւ տեսնենք, թէ իրենք զիրենք մարդկային իրաւունքներու ու ազատութեան ախոյեան ներկայացնող պետութիւններ ու պետական անձնաւորութիւններ, բաւարար քաջութիւն ու ողջմտութիւն չեն ցուցաբերեր հրապարակաւ հաստատելու Հայ ազգին դէմ գործուած ցեղասպանութեան իրողութիւնը:

Բայց հակառակ մեր ցաւին, ցասումին ու շարունակուող իրաւազրկութեան, մենք յուսալքըւած չենք: Մենք կը հաւատանք արդարութեան: Մենք վստահութեամբ կը սպասենք անոր անխուսափելի յայտնութեան:

Մարդկութեան պատմութիւնը ցոյց կու տայ, եւ մեր Քրիստոնէական հաւատքն ալ կը վկայէ, թէ ճշմարտութիւնը յաւիտենական է եւ ի վերջոյ ա՛ն է որ պիտի յաղթանակէ: Ուրեմն, ցեղասպան ազգին պետական պաշտօնակալները, պատմաբանները ու վարձկանները որչափ որ կ'ուզեն թող փորձեն մաքրաջրել թուրքին արիւնահոտ պատմութիւնը եւ ուրանալ անոր ոճիրը: Պատեհապաշտ պետութիւններ ու վարչակարգեր, իրենց սեփական ոճիրները քօղարկուած պահելու մըտահոգութեամբ, եւ կամ իրենց ժամանակաւոր շահերուն սիրոյն թող յամառին չընդունելու մեր ազգին դէմ գործուած եղեռնին պատմականութիւնը: Այսօր, արար աշխարհ ծանօթ է 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան պատմութեան ու անոր պատմականութեան: Բովանդակ մարդկութիւնը վկայ է այն ջարդերուն, որոնց ենթարկուած է մեր ազգը:

Արդ, մենք կը հաւատանք թէ, ուշ կամ կանուխ, քաղաքակիրթ մարդկութիւնը, իր մարդկայնութեան հաւատարիմ մնացած ըլլալու իսկ սիրոյն, ճըշմարտութեան կողմնակիցը պիտի դառնայ եւ արդարութեան դատաստանին պիտի յանձնէ ցեղասպան ազգը:

Սակայն, այսօր, ամենէն աւելի «մեծ եղեռնէն եկող» մեր ազգին բեկորներուն զաւակները ծանօթ են այն կոտորածներուն եւ անգթութիւններուն, որոնց զոհ գնաց մեր ամբողջ ժողովուրդը: Եւ անոնք, մեր ժողովուրդին նահատակութեան պատգամին գիտակցութեամբ , արդար զայրոյթի ու բողոքի ձայնով, արդարութիւն կը պահանջեն մեր իրաւազուրկ ազգին:

Սուրով ու հուրով կարելի է ընկճել, եւ նոյնիսկ բնաջինջ ընել մարդոց հողեղէն մարմինները: Բայց աշխարհի վրայ չկայ ոյժ մը որ կրնայ նուաճել մարդ էակին ազատութեան ձգտող աստուածատուր ոգին: Արեւուն տակ չկայ ոյժ մը, որ կրնայ սանձել ճշմարտութեան զօրութիւնը: Այո անխուսափելիօրէն պիտի գայ այն օրը, երբ պիտի լսուի յանուն արդարութեան ու մեր ժողովուրդին արդ[illegible] իրաւունքներուն բարձրացող մեր նոր սերունդին ձայնը: Եւ այն ժամանակ, ոճրագործ ու կողոպտիչ ժողովուրդը ստիպուած պիտի ըլլայ արդար հատուցում ընել մեր ազգին:

Բայց մեզի համար ամենէն յուսադրիչ պարագան այն է, որ Աստուած ծանօթ է մեր ազգին դէմ գործուած ոճիրին ու անարդարութեան, եւ Անիկա, որպէս «բոլոր երկրի դատաւորը», պիտի «դատէ աշխարհը արդարութիւնով ու ժողովուրդները՝ իր ճշմարտութիւնով»: Ցիսուսը մեռելներէն յարուցանող մեր Աստուածը, իր ձեռքերուն մէջ ունի աշխարհի պատմութեան ղեկը: Որպէս Արդարութեան Արեգակ ու Սիրոյ Տէր, Անիկա թոյլ պիտի չտայ որ խաւարի ու չարութեան ուժերը տիրապետեն աշխարհի: Ցարմար ժամանակին, Անիկա «դուրս պիտի հանէ արդարութիւնը՝ լոյսի պէս ու մեր իրաւունքը՝ կէսօրուան պէս», որպէսզի իր ստեղծած ու սիրած աշխարհին մէջ, «իրաւունքը ջուրի պէս վազէ ու արդարութիւնը՝ գետի պէս»:

Սակայն մինչեւ այդ Արդարութեան ու Հատուցման Մեծ Օրը, անհրաժեշտ է որ հաւատարիմ մնանք մեր ազգային ու Քրիստոնէական ինքնութեան, իւրաքանչիւր Ապրիլեան Եղեռնի ոգեկոչում վերածելու առիթի մը՝ հաւատարմութիւն վերուխտելու մեր նահատակներուն թողած աւանդին -մեր Քրիստոնէական հաւատքին, մշակոյթին, լեզուին ազգային ու հոգեւոր արժէքներուն եւ արդար դատին: Այն ժամանակ մեր մէկ ու կէս միլիոն նահատակները մեռած պիտի չըմնան, այլ յարութիւն առած՝ անոնք պիտի վերապրին իւրաքանչիւր հայու մէջ, եւ նոր թափ պիտի տան մեր ժողովուրդին վերելքին՝ դէպի նոր եւ աւելի բարձր իրագործումներու, որպէսզի մեր ազգը, իր աստուածատուր առաքելութեան համեմատ, շարունակէ իր ուրոյն ըլլալ պաստը բերել մարդկային քաղաքակրթութեան յառաջդիմութեան ու Աստուծոյ Թագաւորութեան վերջնական հաստատման:

Եւրոպական Խորհրդարանական Պատուիրակութիւնը Հայաստան Կ'այցելէ

Եւրոպական խորհրդարանական պատուիրակութիւն մը Հայաստան մեկնած էր 29 Մարտին երկօրեայ այցելութեամբ: Պատուիրակութեան մաս կը կազմէին Տիկ.Սիմոն Վէյլ *(Եւրոպական Խորհրդարանի նախկին նախագահ),* Տիկ.Նիքոլ Փէռի *(Եւրոպական Խորհրդարանի փոխ նախագահ),* Ժան Վանտըմըլպրուք *(Արք ան Սիէլ խումբի նախագահ): Խումբին կ'ընկերակցէին հայազգի ժան Փիէր Մահէ եւ հայ-ֆրանսական Համակամութեան նախագահ Քրիստիան Տէր Ստեփանեան:*

Այցելութեան նպատակն էր ուսումնասիրութիւն մը կատարել հայկական իրականութեան մասին: Եւրոպացի քաղաքագէտները իրենց համակամութեան վկայութիւնը պիտի բերէին վերջին շըջանին այնքան ցնցուած հայ ժողովուրդին: Նոյն օրը Երեւան վերադարձած են Հ.Հ.Շ.-ի ղեկավարներն Լեւոն Տէր Պետրոսեան եւ Բաբգէն Արարքցեան, որոնք Ֆրանսա կը գտնուէին:

Հայաստան անցուցած իրենց 48 ժամուան կեցութեան ընթացքին պատուիրակութիւնը այցելած է Խոր Վիրապ եւ Երասխաւան: Հ.Հ.Շարժումի իրիկուան միթինկին ներկայ եղած է միայն ժաք Վանտըրմըլպրուք եւ շատ կարճ ելոյթ մըն ալ ունեցած է, չեչտելով թէ ինք ալ որպէս Ֆլաման, լաւ կը հասկնայ հայ ժողովուրդը: Տեսակցութիւն մը տեղի ունեցած է նաեւ անկախութիւն պահանջող միութեան հետ: Շաբաթ օր այցելութիւն մը տրուած է Գերագոյն Խորհուրդին, ուր զիրենք ընդունուած է Տեղակալ՝ Սուրէն Աւետիսեան, ապա հիւրերը անցած են Լենինական:

Կիրակի առաւօտ, վերադարձի ճամբուն վրայ, Տիկ.Սիմոն Վէյլ եւ իր ամուսինը, Նիքոլ Փէրի, Ժաք Վանտըմըլպրուք հանդիպած են Էջմիածին եւ ընդունուած Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ, որուն հետ շատ ջերմ տեսակցութիւն մը տեղի ունեցած է եւ խօսուած է նաեւ Վազգէն Ա.ի հաւանական մէկ այցելութեան մասին Եւրոպական Խորհրդարանին, Պրիւքսէլ ի մօտոյ:

Հայաստանի Եւ Ատրպէյճանի Վարչապետներու Հանդիպում Թիֆլիսի Մէջ

Հայաստանի վարչապետ Վլադիմիր Մարգարեանց եւ Ատրպէյճանի վարչապետ Կ.Կազանով Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի մէջ հանդիպում ունեցած են, մասնակցութեամբ զոյգ հանրապետութիւններու փոխ-վարչապետներ Տայեանի եւ Կաճիեւի: Հանդիպումին ներկայ գտնուած են Մոսկուայէն Փոխադրութեան Նախարարութեան ներկայացուցիչներ:

Քննարկուած նիւթերը գլխաւորաբար կեդրոնացած են երկու հանրապետութիւններու միջեւ առկախ երկաթուղիի եւ փոխադրութեան տագնապին: Մասնակցող կողմերը համաձայն եղած են պատասխանատուներու միջեւ աւելի բաց շփումներու հաստատման անհրաժեշտութեան:

Հոգեհանգիստ

Կիրակի 22 Ապրիլին, յաւարտ Ս.Պատարագի, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի, Ս.Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մեր սիրելի ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ եղբօր՝

Վահէ Չըննօզեանի

մահուան երրորդ տարելիցին առիթով:

Ներկայս կը ծանուցանենք ի գիտութիւն մեր ազգականներուն, բարեկամներուն եւ հանգուցեալին յիշատակը յարգողներուն:

Այրին՝ Տիկ.Տորիս Չըննօզեան
Զաւակները, Թոռները եւ Եղբայրները

24 Ապրիլի

Գրեց՝ Վարուժան Ամեմեան

Օրացոյցն այդ օր -ինծի կը թուի-
Վերջին է հասեր օրերու հաշուին,
Փակուեր է էջը՝ ոսկեայ տառերով կեանքի պատմութեան,
Ընդմիշտ կորսուեր այն ինչ դարերը տուեր են մեզի:

Օրացոյցն այդ օր թուական չունի,
Ուր, ժամանակը կեցեր է յանկարծ,
-շլուար, հաշմուած-
Եւ տարեթուի տոմարներուն մէջ
Դարձեր՝ անանուն:

Ոչ ոք զայն բրցուց այն օրէն ի վեր...
Ու պիտի մընայ նոյն տեղն առյաւէտ
Խորհրդանիշը՝ խաչելութեան մը,
Ե՛ւ դատապարտութեան,
Ուր ժողովուրդ մը մերժեց սուր բռնել
Եւ սուրո՛վ գնաց:

Պիտի գայ անշուշտ վաղ թէ անագան
Այդ կոյր օրուան հետ հաշուի նստելու,
Օրը տօնելու՝ քաաննիգ Ապրիլի,
Եթէ խաչն իրա՛ւ սուրի վերածուի,
Առնականանա՛յ անապատներու զարմը մընացորդ
Եւ գիտնայ մեկին թէ ոգօր է ա՛ն
Ով բազուկ ունի եւ ոչ՝ խղճմտանք:

Օրացոյցն այդ օր -շատ վստահաբար-
Անգամ մը եւս պիտի արիւնի,
Բայց ո՛չ անմեղի անթաղ զոհերով
Այլ բրտունցքուած՝ պահանջատէրի գըրոհով արբուն
Հերոսնե՛ր ծնին:

Մինչ այդ, ըսպասելն է խոհեմութիւնը...
Ըսպասելն ուրի՛շ պատրաստութիւն է
-Համրաւը դառնալու, ուժանակուելու
Խոհականութեան:

Պիտի գայ անշուշտ վաղ թէ անագան
Հաշուի նստելու պահը սպասուող
Բայց մե՛ր իսկ կամքով, մե՛ր իսկ արիւնով
Թէ արդարութիւը ձեռնածալ մընայ
Եւ խղճմտանքը շարունակէ միշտ
Հաշուետու մընալ հրզօրի կամքին:

Մենք դեռ կրսպասենք
Օրը տօնելու քաաննիգ Ապրիլի...

"God says to man 'I heal you, therefore I hurt, love you, therefore punish' ".

Rabindranath Tagore

«Աստուած մարդուն կ'ըսէ. "Քեզ բուժելու համար կը տանջեմ, քեզ սիրելուս համար կը պատժեմ" »:

Ռապինդրանաթ Թակոր

Իգքնաքննութիւն



Ծա՞տ կը սիրէ մեզ Հայր Աստուած,
Մեզ՝ չարչարուող ազգը հայոց,
որ այսքան ցաւ կը շնորհէ...
Ցաւ տանիլը լաւ գիտենք մենք.
Բայց... բուժուելու կարո՞տ էինք:

Միթէ կրնա՞նք բուժուած սեպուիլ
երբ դեռ մեր մէջ կան մանրէներ
Նախանձ ու խարեբայութեան,
անվախութեան,
անտարբերութեան,
անգիտակցութեան,
նիւթապաշտութեան...
ու մասամբ նորին,
ինչպէս բոլոր մարդկանց մէջը.
բայց մենք, հայեր, տարբեր ազգ չէ՞նք,
ընտրեալ Նոյի ժառանգորդնեի:
Նոր, պատանի հայրենիքէն
դուրս թողուցի՞նք այդ մանրէները...

Ծա՞տ կը սիրէ մեզ Հայր Աստուած,
Քանի այդքան մեզ կը պատժէ,
ինչպէս կառապանը ձիուն
մտրակելով որ չըթուլնայ,
ինչպէս վարպետ պարտիզպանը
փըտած ճիւղերը կտրելով
առողջները կ'ուռճացընէ:

Որո՞նք են մեր յանցանքները:

Մենք ստացանք հրաշալի
մարմին ու միտք, սիրտ ու հոգի.
մարմիններով՝ աշխատեցանք,
մտքով, հոգւով մենք ի՞նչ ըրինք:
Հրահանգն էր սիրել զիրար,
միթէ գիտցա՞նք զիրար սիրել:
Սուրբ Մեսրոպին գիրն առաջին
Իմաստութի՞ւն ճանչնալ եղաւ.
միթէ գիտցա՞նք զայն կատարել:
Վերապրեցանք, բայց հասունցա՞նք:

Եթէ կեանքի պատիժներէն
շարունակենք դեռ չըսորվիլ...
աւա՜ղ, ափսո՜ս... կորսուած ենք:

Ալիս Թարագճեան-Եզեկելեան
Օլիվոս, Ցունուար 7, 1990

Հոգեհանգիստ

Կիրակի, 22 Ապրիլին, յաւարտ Ս.Պատարաքի, հոգեհանգըստեան պաշտօն պիտի կատարուի Ս.Գ.Լ.Մայր Տաճարին մէջ, մեր սիրելի ամուսնոյն, հօր, մեծ հօր եւ եղբօր՝

Կարապետ Մալճեանի

մահուան հառասունքին առիթով:

Ներկայս կը ծանուցանենք ի գիտութիւն մեր ազգականներուն եւ բարեկամներուն:

Այրին՝ տիկ.Լուսի Մալճեան
Զաւակները՝ տէր եւ տիկ. Էտուարտօ եւ Ալեխանտրա Մալճեան
Տէր եւ տիկ. Մարթին եւ Սիլվիա Քէշիշեան
Ալեխանտրօ Մալճեան
Եղբայրները եւ թոռները

Կը նուիրեն

Կը Նուիրեն

Ողբացեալ Կարապետ Մալճեանի մահուան հառասունքին առիթով, Մալճեան եղբայրներ կը նուիրեն.

Ս.Գ.Լ.Կրթ.Հաստատութեան՝	Ա. 1.500.000
Վ.Լոփէսի Ազգ.Վարժարանի՝	Ա. 1.500.000
Խրիմեան Կրթ.Հիմնարկութեան՝	Ա. 1.000.000
Արծրունի Ազգ.Վարժարանի՝	Ա. 1.000.000
Մխիթարեան Վարժարանի՝	Ա. 1.000.000
Մ.Մանուկեան Կրթ.Հաստատութեան՝	Ա. 1.000.000
Պաղդէեան Ազգ.Վարժարանի՝	Ա. 1.000.000
Հ.Օ.Մ.ի Հանգստեան Տան՝	Ա. 1.000.000
ԱՐՄԵՆԻԱյի՝	Ա. 500.000
«Սարտարապատ»ի՝	Ա. 500.000

Llamado a Nuestra Comunidad

El 24 de abril de 1990 se conmemora el 75º. aniversario del Genocidio Armenio.

Este crimen de lesa humanidad, uno de los más terribles que se haya cometido en la historia, permanece impune. Los justos reclamos de todo un pueblo martirizado y disperso por el mundo son desoídos y se le niega el derecho de que sus territorios ancestrales le sean restituídos. Más aún, los descendientes y consanguíneos de esos genocidas organizan nuevas masacres en estos días, en nuevas oleadas de fanatismo y salvajismo que cobran miles de vidas.

Sin embargo, a fines del siglo veinte, el pueblo armenio se prepara más que nunca a conmemorar a su millón y medio de mártires inmolados en el Primer Genocidio del Siglo XX. Este año las conmemoraciones revisten un carácter muy especial. El pueblo armenio todo no sólo renueva su promesa de sobrevivir y perdurar, sino que además lleva adelante su justa lucha reivindicativa, haciendo un llamado al mundo entero para que apoye decisivamente y en forma concreta su impostergable Causa, que es a la vez la Causa de todos los hombres que aspiran a que se haga justicia.

En ocasión del 75º. aniversario del Genocidio Armenio, la armenidad toda, tanto en Armenia como en la Diáspora, venciendo obstáculos y dificultades de todo tipo, hace conocer sus justos reclamos e inalienables derechos a través de las conmemoraciones de abril. El pueblo armenio todo, lucha para que no sólo sea condenado mundialmente el Estado Turco genocida sino, además, para que todos los pueblos y gobiernos amantes de la justicia y la paz tomen las medidas necesarias para impedir todo tipo de crímenes alentados por fuerzas, de ayer o de hoy, imbuídas de ideología panturquista. Es un hecho irrefutable que en los últimos tiempos, si bien bajo nuevas formas y en diversos lugares, el panturquismo actúa con el mismo salvajismo de antaño, con la secuela de numerosas víctimas.

Con motivo de conmemorarse el 75º. aniversario del Genocidio Armenio, el pueblo armenio exige en forma unánime que todos los actos genocidas de ayer y de hoy, no importa en qué lugar se perpetren, sean sometidos al castigo más severo, para que los mismos no se repitan en ningún sitio.

La comunidad armenia de la República Argentina, como parte activa e indivisible de la Diáspora armenia, con una experiencia y una trayectoria de décadas en materia reivindicativa, conmemorará en forma conjunta este aniversario, consciente de la significación que tiene la unidad en estos momentos históricos.

Tal como se señala en el programa de actos, teniendo en cuenta la naturaleza y la importancia de los mismos, es preciso que todos participemos de esta conmemoración comunitaria.

Con este convencimiento y espíritu, hacemos llamado a todos los integrantes de nuestra comunidad sin distinción, para que participen activamente de los actos conmemorativos, especialmente del acto público central y de la demostración de protesta que le seguirá frente a la embajada de Turquía en esta Capital, para mantener alto nuestro espíritu reivindicatorio.

Buenos Aires, abril de 1990
Comisión Comunitaria del 75º aniversario del Genocidio Armenio

COCINA



Isabel Tchalian

BIZCOCHUELO ESPONJOSO

Batir 200 grs. de azúcar molido junto con 6 huevos, entibiando la preparación sobre el fuego durante 5 minutos. Retirar, seguir batiendo y agregar 50 gramos de manteca derretida, 5 gotas de esencia de vainilla y 150 gramos de harina tamizada con una cucharada de polvo de hornear. Volcar la mezcla en un molde enmantecado y enharinado y cocinar en horno de calor moderado durante una hora. Una vez a punto, retirar el bizcochuelo del horno, dejarlo reposar durante unos minutos, desmoldar y dejar enfriar.

MASA PARA PIONONO SALADO

Poner en un bol 4 yemas junto con 3 cucharadas de azúcar molido, y batir hasta que la preparación quede espumosa, agregar 2 cucharadas de agua helada, una cucharadita de sal, una cucharadita de pimienta y, poco a poco, 4 cucharadas de harina tamizada.
Incorporar a esa preparación 4 claras batidas a punto de nieve. Extender la preparación sobre una placa forrada con papel manteca previamente enmantecado y hornear a calor vivo durante 7 minutos.
Retirar, desmoldar sobre una servilleta húmeda y arrollar quitándole el papel. Dejar enfriar antes de rellenarlo.

RECREACION INFANTIL EN MARASH

El sábado 7 del corriente se inició en la sede de la Unión Compatriótica Armenia de Marash el segundo curso de recreación infantil organizado por la Comisión de Jóvenes de la entidad, ante una masiva concurrencia de niños y padres, para los cuales tuvo cálidas palabras de bienvenida el Presidente de la entidad, señor Haig Lomlomdjian, quien destacó la significación del funcionamiento de este curso así como el propósito que anima a este respecto a los directivos de la Institución.

Dicha disciplina comprende la realización de actividades creativas en artes plásticas, música y danzas armenias, así como la práctica del ejercicio físico, el fútbol y otros deportes, acciones que habrán de cumplirse los sábados entre las 15 y las 19, descartándose que, con la efectiva colaboración de las señoras y señoritas de Marash, habrá de alcanzar tanto o mayor éxito que el año anterior.

CABARET DE LAS ARTES

La escritora Felisa Kuyumdjian estará el Miércoles 2 de Mayo, a las 20 horas, en la Sala F. del Centro Cultural General San Martín, presentando el espacio **"Invitación al Canto, la Danza y la Poesía"**, con la participación de jóvenes poetas. Los recitados estarán a cargo de Máximo Paz, en la danza actuará la bailarina Patricia Russo, en los instrumentos Ana Padovani (laud y canto) y A'Nuar (canto y guitarra)

• COLEGIO MEKHITARISTA •
Comision de Padres
* " GRAN AVANT PREMIERE " *
Cine America.....Callao 1057
• Miércoles 16 de Mayo de 1990 / 22.30 horas •

LILIANA M.M. MERDIKIAN
abogada
Ricardo Gutierrez 1357
Pta. Baja "A" — OLIVOS
T.E.: 790—6779 de 14 a 18

Daniel Youssefian e Hijos S.A.
Distribuidor y Mayorista Téxtil Blanco y Tejidos en general
Sarmiento 2357 Buenos Aires
TE. 48-9442/5298

Dr. Arturo Balassanian
Escribano
Registro Notarial 1094
Florida 716 2º Piso — Of. "K"
T.E.: 322—2768

Periódico Armenio
"SARDARABAD"
de la
ASOCIACION CULTURAL TEKEYAN
Redacción y Administración
Gorriti 4804
1414 CAPITAL FEDERAL
T.E.: 771—2520
Horario de atención
Lun a Vier de 10.00 a 19.00
Registro Nac. de la Propiedad Intelectual
Nº 174428
Director
NAHABET NAHABETIAN
Corresponsalía y recepción de avisos y suscripciones en
BRASIL
Sr. Hrair Chahinian
Av. Coxingui 191 Ap 84
Cep. 00579—San Pablo
T.E: 813—6731
URUGUAY
Dr. Pedro Tanielian
Benito Blanco 675 Ap. 201
T.E: 70—3114 Montevideo